



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

№ 1152-Ա/Ք

11. 12. 2014թ.

2015/2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇԵՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006թ. սեպտեմբերի 15-ի N 740-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի 3.4-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել 2015/2016 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության օտար լեզուներից, ինֆորմատիկա և համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների հետևյալ անցումային շեմերը.
  - 1) Անգլերեն լեզու – 54 միավոր՝ բնագիտական, տեխնիկական, 61 միավոր՝ հումանիտար-հասարակագիտական, 79 միավոր՝ հումանիտար-բանասիրական:  
Է.00.04, Է.00.05, Ժ.01.01, Ժ.01.02, Ժ.01.04, Ժ.01.05, Ժ.01.08, Ժ.01.09, Ժ.02.01, Ժ.02.02, Ժ.02.03 մասնագիտությունների համար սահմանել՝ 54 միավոր:
  - 2) Ֆրանսերեն լեզու – 200 միավոր՝ բնագիտական, տեխնիկական, 300 միավոր՝ հումանիտար-հասարակագիտական, 400 միավոր՝ հումանիտար-բանասիրական:  
Է.00.04, Է.00.05, Ժ.01.01, Ժ.01.02, Ժ.01.04, Ժ.01.05, Ժ.01.08, Ժ.01.09, Ժ.02.01, Ժ.02.02, Ժ.02.03 մասնագիտությունների համար սահմանել՝ 200 միավոր:
  - 3) գերմաներեն լեզու - 60 միավոր՝ բնագիտական, տեխնիկական, 80 միավոր՝ հումանիտար-հասարակագիտական, 100 միավոր՝ հումանիտար-բանասիրական:  
Է.00.04, Է.00.05, Ժ.01.01, Ժ.01.02, Ժ.01.04, Ժ.01.05, Ժ.01.08, Ժ.01.09, Ժ.02.01, Ժ.02.02, Ժ.02.03 մասնագիտությունների համար սահմանել՝ 60 միավոր:
  - 4) ինֆորմատիկա և համակարգչից օգտվելու հիմունքներ - 35 միավոր՝ բնագիտական, տեխնիկական, 25 միավոր՝ հումանիտար-հասարակագիտական, 20 միավոր՝ հումանիտար-բանասիրական:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը /պետ՝ Ռ.Սուքիասյան/ 5-օրյա ժամկետում հրամանի մասին տեղեկացնել բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին:
3. Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /պետ՝ Ա.Բաղդասարյան/ 5-օրյա ժամկետում հրամանը տեղադրել նախարարության կայք-էջում:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանին:



**ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ**